

ՔԱՂՎԱԾՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ 18 ԱՊՐԻԼԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 03/03-Լ ՈՐՈՇՈՒՄԻՑ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը (...)

ՈՐՈՇԵՑ՝

1. ՀՀ փաստաբանների պալատի որակավորման քննությունը չհանձնած կամ որակավորման քննությանն անհարգելի չմասնակցած ունկնդիրների հատուկ ուսուցում անցնելու վճարի չափը յուրաքանչյուր մոդուլի համար սահմանել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման հատուկ ուսուցումը սկսելու օրվանից եռօրյա ժամկետում:

2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի հաստատած և տվյալ ժամանակահատվածում գործող Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի պահանջների խախտմամբ պայմանավորված հատուկ ուսուցում անցնելու դեպքում՝ վճարի չափը սահմանել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման հատուկ ուսուցումը սկսելու օրվանից եռօրյա ժամկետում:

(...)